ՀՀ Կառավարության աոընթեր
Պետական եկամուտների կոմիտեի
իրավաբանական վարչություն

ՀՎՀՀ՝ 43193783
ՀՕՀ՝ 1608960030

Մանուկ Արայի Հայրապետյան

անուն, ազգանուն, հայրանուն

Կոտայքի մարզ, Բյուրեղավան, Կոտայքի փ., 28 13

հաշվառման /բնակության/ հասցե

ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1337-Ն որոշման հիման վրա ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն՝ Ձեր կողմից 2020թ. օտարվել է Վայոց Ձոր, գ. Ձառիթափ, Խնձորուտ 2-րդ փ. 40 հասցեում գտնվող անշարժ գույքը:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «բ» ենթակետի՝ վերոնշյալ գույքի օտարումը չի համարվում հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտ, իսկ գույքի օտարումից ստացվող եկամուտներն այլ հավասար պայմաններում համարվում են եկամտային հարկով հարկման օբյեկտ՝ համաձայն Օրենսգրքի 141-րդ հոդվածի:

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից 13.05.2021թ. կազմված թիվ 12905/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության՝ Ձեր կողմից չկատարած հարկային պարտավորությունը 13.05.2021թ. դրությամբ կազմել է 3.321.580 դրամ, որից հարկ՝ 3.291.300 դրամ, տույժ՝ 30.280 դրամ:

Տեղեկացնում ենք, որ համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով:

Նշված հարկային պարտավորությունները սահմանված ժամկետում չկատարելու դեպքի առթիվ, ի կատարումն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների՝ առաջարկում ենք սույն ծանուցումը ստանալուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 11-ին ներկայանալ վարչական վարույթի նախնական լսումներին, կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունը և/կամ առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան Ս. Դավթի 87 ա: Չներկայանալու դեպքում գործը կարող է քննվել Ձեր բացակայությամբ:

Տեղեկացնում ենք նաև, որ վերը նշված պարտավորության կատարումն ապահովելու նպատակով հարկային մարմնի կողմից կարող է կիրառվել հարկ վճարողի դրամական միջոցների և գույքի արգելադրում ՀՀ հարկային օրենսգրքի 78-րդ գլխի համաձայն:

ՀՀ ՊԵԿ ԻՎ ՀԳ և ՊԿԱ բաժնի առաջատար մասնագետ՝ *Լ. Ջաղացպանյան*

հեռ.՝ 011-54-91-91/91-68/

30/Հլս/2021